

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

**Նելլի Նորիկի Մուրադյանի** «*Ասպիրակ (Spiraea L.)* ցեղի գնահատումը որպես բարձր գեղազարդ տեսակների ներմուծման աղբյուր Հայաստանում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Գ.00.05 «Բուսաբանություն, սնկաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հայաստանի ներկայիս բնակավայրերը աղքատ են գեղազարդ տնկարկներով և կանաչ տնկարկները չեն համապատասխանում կանաչապատման նորմերին: Այս ոլորտում առկա են համապարփակ ուսումնասիրություններ, սակայն ասպիրակ ցեղի վերաբերյալ առանձին ուսումնասիրությունները շատ կարևոր են, քանի որ կանաչապատման գործում ասպիրակները իրենց գեղազարդությամբ զրավում են առանձնակի տեղ:

Նելլի Մուրադյանի թեկնածուական ատենախոսությունը կազմված է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից և զրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ապրոբացիան:

Առաջին գլխում նկարագրված է ասպիրակ ցեղի էկոլոգաաշխարհագրական տարածվածությունը և տաքսոնոմիական կազմի վերլուծությունը:

Էջ 17-ից 22-ը ներկայացված է ասպիրակ ցեղի 3 սեկցիայի 69 տեսակի աշխարհագրական տարածվածությունը աղյուսակի տեսքով, ինչը այդ տեղեկությունները դարձնում են ավելի ընկալվող:

Գլուխ 2-ը նկարագրում է Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիների և Իջևանի դենդրոպարկի դենդրոլոգիական պայմանները, կապված ծառաբույսերի ներմուծման հետ: Այս գլխում տրվում են տեղեկություններ օդի միջին ջերմաստիճանի, ամսական տեղումների վերաբերյալ, որոնք ներկայացված են նաև գրաֆիկական տեսքով: Բերվում են նաև տեղեկություններ հողային պայմանների վերաբերյալ: Արված են հետևություններ, թե այդպիսի պայմաններում ինչպիսի դիմացկունության ասպիրակներ կարելի է աճեցնել տվյալ վայրերում:

Գլուխ 3-ում նկարագրված է հեղինակի կողմից հետազոտված նյութը և մեթոդիկան:

Մանրամասն նկարագրվում են ֆենոդիտումների անցկացման, ջրային անբավարարությունը որոշելու, ֆոտոսինթեզի ինտենսիվության որոշման մեթոդները: Կատարվել են մեջբերումներ բազմաթիվ գիտական մասնագիտական հրատարակություններից, որոնք հանդիսացել են այս աշխատանքի մեթոդական հիմքը:

Գլուխ 4-ը կազմված է 4 ենթագլուխներից: Ենթագլուխ 4.1-ում նկարագրվում է Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիներ և Իջևանի դենդրոպարկ ներմուծված ասպիրակների տաքսոնոմիական կազմը, տեսակների քանակը, դրանց աշխարհագրական ծագումը: Հեղինակը, համեմատելով 1985 թվականի և 2015-2018 թվականների քանակական տվյալները, փաստել է, որ ասպիրակ ցեղի տեսակների քանակը նվազել է 43-ից մինչև 8-ը, հիմնականում խնամքի բացակայության պատճառով:

4.2 ենթագլխում նկարագրվում է Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում աճող ասպիրակների սեզոնային աճը, զարգացման դինամիկան, գեղազարդ հատկանիշները: Ասպիրակների բուսաճական փուլերը ներկայացված են ֆենոսպեկտրներով:

Երևանի բուսաբանական այգում ասպիրակների սեզոնային զարգացումը ուսումնասիրվել է 4 տեսակի մոտ, Սևանի բուսաբանական այգում՝ 2, Վանաձորի բուսաբանական այգում՝ 1, իսկ Իջևանի դենդրոպարկում՝ 2: Անհասկանալի է տեսակների այս ընտրությունը, քանի որ, տվյալների նման սահմանափակության պարագայում դժվար է կատարել համեմատական վերլուծություն:

4.3 ենթագլխում նկարագրվում է ասպիրակների սերմերով և կտրոններով բազմացման առանձնահատկությունները: Անհասկանալի է, թե ինչով է պայմանավորված ասպիրակների 7 տեսակի սերմերի ցանքը գարնանը, իսկ 11-ինը՝ աշնանը:

Աղյուսակ 9-ում և 10-ում բերվում են ցուցանիշներ ասպիրակ ցեղի ներմուծված տեսակների սերմերով և կտրոններով բազմացման վերաբերյալ: Աղյուսակներում տրվում են նաև ասպիրակների բնական տարածման արեալները, սակայն այդ տվյալների ներկայացման նպատակները պարզաբանված չեն: Անհասկանալի է կտրոններով բազմացման համար 5 տեսակի ասպիրակների ընտրությունը:

4.4 ենթագլխում նկարագրվում է 3 տեսակի ասպիրակների էկոֆիզիոլոգիական հարմարվողականությունը Երևանի, Վանաձորի, Սևանի բուսաբանական այգիներում և Իջևանի դենդրոպարկում: Մանրամասն նկարագրվում են ջրային ռեժիմի համալիր փոփոխությունները կապված արտաքին գործոնների հետ, սակայն չի պարզաբանվում թե ինչով է պայմանավորված ուսումնասիրության համար միայն 3 տեսակի ասպիրակների ընտրությունը:

Գլուխ 5-ում նկարագրվում է ներմուծված ասպիրակների նպատակային օգտագործման հեռանկարները հանրապետության բնակավայրերի կանաչապատման մեջ: Այս գլուխը կազմված է 2 ենթագլուխներից:

5.1 ենթագլխում մանրամասն նկարագրվում է ասպիրակների օգտագործման հեռանկարները տարբեր կոմպոզիցիոն և երկարատև ծաղկող այգիների ստեղծման համար, ցուցադրելով ասպիրակների բարձր գեղազարդությունը և լայն օգտագործման հնարավորությունները:

5.2 ենթագլխում նկարագրված է բարձր գեղազարդ 30 տեսակի ասպիրակների բնութագրերը, որոնք առաջարկվում է օգտագործել Հայաստանի բնակավայրերի կանաչապատման մեջ: Հեղինակը մանրամասնորեն նկարագրում է յուրաքանչյուր տեսակի ասպիրակի մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական հատկանիշները, գեղազարդությունը: Այս ենթագլխում ասպիրակների լատիներեն անվանումների կողքին բացակայում են հեղինակների անունները:

Առանձնակի նշվել է այդ ասպիրակների էկոլոգիական գործոնների հանդեպ վերաբերմունքը, ինչպես նաև օգտագործման պիտանիությունը ըստ կանաչապատման կատեգորիաների: Մակայն, կանաչապատման տերմինաբանության մեջ կատեգորիա են համարվում ընդհանուր օգտագործման, սահմանափակ օգտագործման և հատուկ նշանակության կանաչ տնկարկները: Մինչ դեռ աղյուսակ 12-ի 8-ից-13 սյունակներում գրված առանձնյակ, խումբ, կենդանի ցանկապատ և այլն, չեն համարվում կանաչ տնկարկների կատեգորիաներ, այլ համարվում են կանաչ տնկարկների կոմպոզիցիայի հիմնական էլեմենտներ կամ տիպեր:

Աղյուսակ 13-ում բերվում են ասպիրակների էկոլոգիական հարմարվողականությունը և օգտագործման հեռանկարները Հայաստանի տարբեր տարածաշրջաններում:

Միացնելով աղյուսակ 12-ի և 13-ի տվյալները, հեղինակը կստանար ավելի կիրառելի պատկեր, հատկապես կանաչապատման գործնական աշխատանքներով զբաղվող մասնագետների համար:

Ատենախոսության 9 եզրակացությունները լիովին համապատասխանում են կատարված հետազոտության արդյունքներին: Հեղինակը ներկայացրել է նաև կիրառական գործնական առաջարկներ Հայաստանում, կանաչապատման մեջ ասպիրակների օգտագործման վերաբերյալ:

Գրականության ցանկը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ընդունված ստանդարտներին:

Աշխատանքում առկա են մի քանի տեխնիկական վրիպակներ:

Ատենախոսության սեղմագիրը լիորեն արտահայտում է աշխատանքի բովանդակությունը:

Իմ կողմից նշված թերությունները հիմնականում կրում են խմբագրական կամ խորհրդատվական բնույթ և ոչ մի կերպ չեն նվազեցնում սույն աշխատանքի կարևորությունը, արժեքը, արդիականությունը և անհրաժեշտությունը: Առավել ևս, որ Հայաստանի բնակավայրերի կանաչապատ տարածքների այսօրվա տագնապալի վիճակից դուրս գալու համար Նելլի Մուրադյանի կողմից կատարված և նմանատիպ այլ աշխատանքների անհրաժեշտությունը շատ մեծ է:

Ատենախոսությունը լիովին համապատասխանում է թեկնածուական աշխատանքների մակարդակին և ԲՈԿ-ի պահանջներին, իսկ այս աշխատանքի հեղինակը՝ Նելլի Նորիկի Մուրադյանը արժանի է ստանալու հայցվող կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական  
համալսարանի Աշխարհագրության,  
կենսաբանության, քիմիայի ամբիոնի դոցենտ,  
կենսաբանական գիտությունների թեկնածու

Ա.Ս. Խաչատրյան

Աշխարհագրության, կենսաբանության, քիմիայի ամբիոնի դոցենտ,  
կ.գ.թ Ա. Ս. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝  
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան  
պետական համալսարանի գիտքարտուղար

Կ.Ռ. Պետրոսյան